ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

# Պարույր Սկայորդի

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

[[Վիքի]] Այս հոդվածը **կարող է վիքիֆիկացման կարիք ունենալ Վիքիպեդիայի որակի չափանիշներին համապատասխանելու համար:**
Դուք կարող եք օգնել հոդվածի բարելավմանը (https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D5%8A%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D6%80_%D5%8D%D5%AF%D5%A1%D5%B5%D5%B8%D6%80%D5%A4%D5%AB&action=edit)՝ ավելացնելով համապատասխան ներքին հղումներ և տեղելով բաժինների դասավորությունը, ինչպես նաև վիքիչափանիշներին համապատասխան այլ գործողություններ կատարելով:

{{Տեղեկաքարտ Միապետ}}

Անհայտ, - մ.թ.ա. մոտ 630) Ասքանազյան իշխանության հիմնադիրը մ.թ.ա. 673-ից: Սկայորդի իշխանի որդին: Հին հայկ. հեղինակները Սկայորդուն (Սպակա) համարում են Սենիքերիմ թագավորի (մ.թ.ա. 705 - 681) վերջին տարիների ժամանակակիցը, որը Հայաստանում ապաստան է տվել Սենիքերիմի հայրասպան որդիներին: Ուստի ենթադրվում է, որ Սկայորդին դաշնակցել է Ուրարտուի Ռուսա Բ արքային՝ ընդդեմ Ասորեստանի: Ասորական, հին հունական և հայկական աղբյուրներում Պարույրը հիշատակվում է (աքքադ. Պարտատուա, հուն. Պրոտոթիես անուններով) որպես Ասորեստանի Ասարխադոն (մ.թ.ա. 681 - 668) և Աշշուրբանապալ կամ Սարդանապալ (մ.թ.ա. 668 - 633) թագավորների ժամանակակիցը: Մ.Խորենացին գրում է, որ Ասորեստանի դեմ կռվում Պարույրն օգնելով Մարաստանի Վարբակես (ըստ Հերոդոտոսի՝ Հարպագ, իսկ ըստ Կտեսիաս Կնիդացու՝ Արբակ) թագավորին, փոխարենը նրանից ճանաչվել է թագավոր: Ըստ Ասարխադոնի արձանագրության Ասքանազյան զունդը՝ Սպակայի (Սկայորդի) գլխավորությամբ մ.թ.ա. 673 – ին կռվել է Ասորեստանի դեմ Մանայի և Արարատի թագավորության կողմում: Սակայն նույն թվականին նրա որդի Պարտատուան (Պարույր) դաշնակցել է Ասորեստանին՝ կնության առնելով Ասարխադոնի դստերը: Տուտով Ասորեստանի հետ նույն հարաբերությունները հաստատել են (հավանաբար Պարույրին ենթակա, կամ միջնորդությամբ) նաև Արարատյան (Ուրարտու) և Մանայի թագավորությունները: Նրա մահից հետո գահը ժառանգել է որդին, որը հայկ. աղբյուրներում հիշատակվում է Հրչե կամ Հրաչյա, հուն. աղբյուրներում՝ Մադիես: Ըստ Հերոդոտոսի, Մադիեսը, ջախջախելով մ.թ.ա. 625 – 624-ին Ասորեստանի Նինվե քաղաքը պաշարած Մարաստանի զորաբանակը (առավել հավանական է՝ մ.թ.ա. 597- 596-ին, քանի որ Կիաքսարը Նինվեն պաշարել է մ.թ.ա. 612- ի մայիսին, հետևաբար մ.թ.ա. 625 – 624-ի մասին խոսք չեր կարող լինել), այնուհետև 28 տարի իր գերիշխանությունն է հաստատել Մերձավոր Արևելքում:

Մովսես Խորենացին, իր «Պատմություն Հայոց» գրքում հրճվանքով գրում է - զվարճանում եմ՝ ոչ փոքր ուրախություն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնյաց սերունդները թագավորության աստիճանի են հասնում:

## Գրականություն


- Հերոդոտոս, Պատմություն 9-րդ գրքից, Երևան, 1986
- Մովսես Խորենացի «Պատմություն Հայոց» -1968թ.
- И. М. Дьяконов «Ассиро – вавилонские источники по истории Урарту» <ВДИ> - 1951г., N3
- ՀՍՍՀ ԳԱ «Հայկական Սովետական Հանրագիտարան»


## Ծանոթագրություններ

- ՀՍՍՀ ԳԱ «Հայկական Սովետական Հանրագիտարան» -1987թ.

Դ․․․(https://hy.wikipedia.org/w/index.php?title=%D4%BF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80:%D5%80%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81_%D5%A1%D6%80%D6%84%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80&action=edit) Հայոց արքաներ [Բացել]

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Պարույր_Սկայորդի&oldid=8669425» էջից